— Այդ կուժին դուք հինգ ղուրուշ գին էք նշանակել, ստացէք եւ մի նորը գնեցէք:

Նա մեծ շնորհակալութեամբ ընդունեց:

— Տիրոջ օրհնութիւնը ձեզ հետ լինի, — ասաց նա խղճալի ձայնով: — Ախար ես էլ գերդաստանի տէր եմ, իմ օգուտը այդպիսի բաներից է...

Ներքեւում ձիաները պատրաստ էին: Հաջի-իսաղը, իր ստացած լիաձեռն բաւականութեան համար, այժմ աւելի քաղաքավարի դարձաւ. նա ինքը վեր առեց մոմը եւ, մեր առջեւից տանելով, առաջնորդեց մինչեւ պանդոկի բակը: Ծիծաղելի էր նայել այդ կիսամերկ ծերուկի վրայ, որը, միեւնոյն ժամանակ թէ պանդոկի հարուստ տէրն էր եւ թէ նրա ստոր սպասաւորը:

Երբ վերջին մնաք-բարեաւն ասացինք, Ասլանը հարցրեց.

— Ես մոռացայ ձեզանից հարցնել, դուք հա՞յ էք:

— Ոչ, պարոն բժշկապետ, ես բողոքական եմ:

ԻԹ. ՏԱՐՕՆ

Ամբողջ գիշերը ճանապարհ գնալով, առաւօտեան լոյսի հետ բացուեցաւ մեր առջեւ Մուշի գեղեցիկ դաշտը, պատմական Տարօնը: Իմ սիրտը թնդաց ուրախութիւնից: Որքա՜ն բաներ էր պատմել այդ դաշտի մասին Ասլանը, որքա՜ն ջերմ զգացմունքներով կապած էր նա իմ հոգու հետ: Մեր առջեւը դրած էր մի հարթ, լայնածաւալ հովիտ, շրջապատուած բարձր լեռներով: Սկսեալ ամենահին ժամանակներից, այդ հովիտը եղել է հանդիսարան ամենամեծ անցքերի, որ կատարուել է հայկական կեանքում:

Տարօ՜ն, ինչպէ՜ս քաղցր հնչում ես դու իմ ականջին, որքա՜ն սիրելի է ինձ քո անունը: Դու Հայաստանի հարաւային սահմանների վահանն էիր. քո վրայ զարկուելով փշրւում էին Ասորեստանի զօրութիւնները. քո վրայ զարկուելով, խորտակւում էր արաբացու կատաղութիւնը, եւ քո դաշտերը ողողւում էին թէ՛ քո զաւակների եւ թէ՛ քո թշնամու արիւնով:

Ես աչքերս դարձրի դէպի իմ ուղեկից Արփիարը: Ոգելից երիտասարդը խորին յափշտակութեամբ՝ ինձ նման, նայում էր Մուշի գեղեցիկ դաշտի վրայ, կարծես թէ սիրահարուած լինէր: Նրա խոշոր, խաժ աչքերը ձգտում էին միանգամից ամփոփել, միանգամից տեսութեան առնել լայնածաւալ տարածութիւնը: Նա դեռ երիտասարդ էր, թարմ երիտասարդ: Գուցէ դպրոցի նստարանից դեռ նոր էր բաժանուել: Գլխի մուգ-շիկագոյն մազերը հիանալի գանգուրներով դուրս էին նայում մոխրագոյն գլխարկի տակից, որ ծածկում